**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

15.08.2019թ.
ժամը $14^{30}$

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
**գնահատողներ՝**

- ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Լ. Թազայան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

1.2 Քանի որ 07.08.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց նրանց ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը **«Դելտա» ՍՊԸ-ի՝** 7-րդ չափաբաժնի մասով, **«Վիոլա» ՍՊԸ-ի՝** 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով և **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի՝** 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 30 րդ, 32-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 60-րդ և 61-րդ չափաբաժինների մասով տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար(համապատասխան) և որոշեց վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը $11^{00}$-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող (ԳԱՊ)** Ա. Նազարյան

**Գնահատող** Վ. Վահանյան

**Գնահատող** Գ. Անտոնյան

**Գնահատող** Հ. Ավետիսյան

**Գնումները համակարգող** Լ. Թազայան